

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՁԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք.Երևան
Ժ.11.00

3 մայիսի 2011թ.

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 41 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Կ. Կարապետյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Առաքելյանը, քաղաքապետի գլխավոր խորհրդական Դ. Մելքոնյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Վ. Ստեփանյանը, քաղաքապետի մամլո քարտուղար Շ. Սարգսյանը, քաղաքապետի օգնական Ն. Ադոնցը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը, աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ. Բաղդասարյանը, աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դ. Գևորգյանը, աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա. Գևորգյանը:

Նիստին ներկա էին հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ՕՐԱԿԱՐԳ

Քաղաքապետ Կ. Կարապետյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2011 թվականի մայիսի 3-ի արտահերթ նիստի օրակարգը.

1. Հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին:

2. Երևան քաղաքի և Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի միջև համագործակցության համաձայնագիրը հաստատելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ – Հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ. Բաղդասարյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել.

1) Հանրային հավաքների անցկացման իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N1 հավելվածի /կցվում է/:

2) Հանրային հավաքների անցկացման իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N2 հավելվածի /կցվում է/:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի և Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի միջև համագործակցության համաձայնագիրը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դ. Գևորգյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Հաստատել 2011թ. ապրիլի 26-ին Երևան քաղաքի և Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի միջև համագործակցության համաձայնագիրը՝ համաձայն հավելվածի /կցվում է/:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Արձանագրեց՝
Ն. Ղուկասյանը